

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Թիֆլիս. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Открыта подписка на 1892 г. (соротъ седьмой годъ изданія)

НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ.“

Редакторъ-издатель Ю. Н. МИЛЮТИНЪ.

Съ 1-го января наступающаго года газета «Кавказъ» переходитъ въ руки новой редакціи и будетъ издаваться по расширенной программѣ и при обновленномъ составѣ сотрудниковъ. Главнѣйшій ея задачей будетъ служить интересамъ Кавказскаго края и его населенія, а также интересамъ Россіи на Востока.

Для сообщенія возможно полныхъ и точныхъ свѣдѣній газета будетъ имѣть корреспондентовъ во всѣхъ губерніяхъ и областяхъ Кавказа, въ важнѣйшихъ мѣстностяхъ Закаспійскаго края и Туркестана, въ Поволжьи, въ Харьковѣ, Одессѣ и другихъ городахъ, а также нѣсколькихъ специальныхъ корреспондентовъ въ С.-Петербургѣ и Москвѣ; а за границею газета «Кавказъ» будетъ имѣть корреспондентовъ въ Азіатской Турціи, Персіи, средне-азіатскихъ ханствахъ и другихъ странахъ Востока, а изъ европейскихъ мѣстностей—въ Парижѣ, Лондонѣ и Константинополѣ. Помѣщаемыя корреспонденціи будутъ касаться какъ политической и общественной жизни, такъ равно и торгово-промышленной.

Газета «Кавказъ» будетъ выходить ежедневно (кроме дней, слѣдующихъ за большими праздниками).

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкою въ Тифлисъ.	Съ перес. по Имперіи.	По почтовому союзу.
На годъ..... 11 р. 50 к.	На годъ..... 13 р. — к.	На годъ..... 18 р. 40 к.
1/2 года..... 6 — "	1/2 года..... 7 — "	1/2 года..... 10 — "
3 мѣсяца..... 3 — 50 "	3 мѣсяца..... 4 — "	3 мѣсяца..... 6 — "
1 мѣсяць..... 1 — 50 "	1 мѣсяць..... 1 — 75 "	1 мѣсяць..... 2 — "

Разсрочка допускается для годовыхъ подписчиковъ по соглашенію съ редакціей, причемъ ингородскими вносятся 3 р. при подпискѣ и по сентябрю и ноябрю; городскими—въ те-же сроки: 3 р., 2 р., 1 р. 50 к., 1 р. 50 к. и 1 р. 50 к.

Подписка принимается въ конторѣ газеты «Кавказъ» (Тифлисъ, Пушкинская, № 12, д. Бабанасова).

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ով է Բաֆայել Պատկանեան.—Ներքին Տեսութիւն. Երկաթուղային գծեր. Նամակ Դիլիջանից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսական լրագիրները կապրիվի ձառի մասին. Թիւրքիայի հայերը. Չինական զորքերը.—ԻՍԿԱՆ ԼՈՌԻՆԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ակնարկներ.

ՈՎ Է ԲԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ընթերցող, գիտէ՞ր ո՞վ է Բաֆայել Պատկանեան. դա մեր առաջին բանաստեղծն է, որի բանաստեղծութիւնները մէջ յայտնված վեհ գաղափարների ազդեցութեան տակ կրթվել է ոչ թէ մի սերունդ միայն, այլ կրթվել են շատ սերունդներ: Այդ բանաստեղծը ծերացել է և չբաւար զրույթեան մէջ է, նա խնդրել է, որ կովկասեան հայոց Բարեգործական ընկերութիւնը ընդունէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

Այս բոլորից յետոյ մեզ կարող են նկատել, «ճշմարիտ է» մեր պատմական պիէսաներում անուշադրութեան են տուած պատմական այս և այն շրջանի անձնաւորութիւնները իրանց իսկական գոյնով, իրանց ժամանակի իսկական գաղափարներով և յատկութիւններով դուրս բերելը, բայց դրա փոխարէն հեղինակները առանձին ուշք են դարձրել մի ուրիշ կողմի վրա—այն է պիէսաների հոգեբանական, գործողութեան հետեւողական, ներքին դարձացման վրա: Տեսնենք:

Եւ արդէն վերեւում ասեցի, որ մեր պատմական դրամաները և ողբերգութիւնները այդ յատկութիւնից էլ զուրկ են: Ասեցէք խնդրեմ, ինչ մի հոգեբանական աստուած, գործողութիւնների ինչ մի ներքին կապ կայ, դիցուք հէնց նոյն «Արշակ»-ի, «Վարդանանց պատերազմի» «Սամուելի» կամ հայ աղիւնիներն թուրքերի գերիւ յետոյ մի «Խուզանի» մէջ: Եթէ օրինակ, «Արշակ» առաջին գործողութեան մէջ Վահան Մամիկոնեան հրապարակ չը գայ և չը մեռնի բեմի վրա,—գրանով

նի իր որդիներնցից մինն, որը սովորում է Թիֆլիսի Արհեստագործ դպրոցում (Պատկանեանի որդին Արհեստագործ դպրոցում...), և ի՞նչ էք կարծում ի՞նչ ընդհանրական Բաֆայել Պատկանեանի որդուն կովկասեան հայոց Բարեգործական կենտրոնական մեծ ընկերութիւնը,—ամսական հինգ ռուբլի:

Եւ այդ ընկերութիւնը ղեկավարում են այն մարդիկ, որոնք ամենանշանաւոր դերը ունեն բռնած Թիֆլիսում, թէ իրանց փողով, թէ իրանց կապերով մեր բոլոր հասարակական հաստատութիւնների հետ, մեր դոմայի, բանկերի, դպրոցների հետ, այն մարդիկ, որոնք ջանում են իրանց ձեռքը դնել բոլոր հասարակական, ազգային, դպրոցական ու եկեղեցական գործերի ղեկը... Եւ այդ մարդիկ այդպէս լուս գիտեն գնահատել հայոց ազգին Պատկանեանի արած ծառայութիւնները: Մենք ամաչում ենք նրանց տեղը և այդ ամօթի զգացմունքն է, որը թելադրում է «Մշակի» խմբագրութեանը իր սուղ, ողորմելի միջոցներից նմանապէս

ոչինչ կորուստ չի ունենայ պիէսան: Հեղինակը հարկաւոր է համարել Գրաստամաղին կենդանի պահել: Բայց եթէ նա մեռնի էլ,—դա իսկի անսպասելի էլ չէր լինի: Եթէ Արշակը ինքն իրան սպանելու փորձարէ՞նք մի նստել և Հայաստան գնալ, հաւատացէք պիէսայի ընթացքը չէր խանգարվի, ինչպէս և ոչինչ անբնական բան չէր լինի, եթէ այդ պիէսաներում այս կամ այն գործող անձը իսկի բեմ չը դուրս գար, կամ եթէ այս և այն տեսարանը յետ ու առաջ դնէին, կամ բեմի վրա ըստն ազգասէր նահատակելու փորձարէն նահատակելին ամբողջ Հայաստանը Ուղում էք վերջապէս այդ պիէսաները հինգ գործողութիւնից երեք շինեցէք, կամ չորսը դարձրէք տասն, կարելի է: Եւ ինչու անկարելի պիտի լինի: Բեմ են դուրս գալիս, և ձառեր ասում, ինչ մի մեծ բան կը լինի, եթէ այդ ձառերը երեք ժամ տեսնու փոխարէն, հինգ ժամ տեսնու: Հաւատացնում եմ, որ եթէ վաղը մի աշխարհայով րէփարտ՝ ժողովրդին աւելի ծիծաղեցնելու համար, փորձէր «Վարդանանց պատերազմի» մէջ լալկան կանայք դուրս բերել, կամ «Արշակի» մէջ պար եկող կանայք,—գրանով պիէսայի գործողութեան ընթացքը մազաչափ էլ չէր փոխվի...

Հանաքը մի կողմ մնայ: Եւ դրա պատճառը այն է, որ այդ բոլոր պիէսաներում գործող ան-

ճ ռուբլի ամսական թոշակ նշանակել մեծ Պատկանեանի որդուն, մինչև որ երիտասարդը կաւարտի իր ուսումը յիշեալ դպրոցում: Ուրեմն «Մշակի» խմբագրութիւնը իր սուղ միջոցներից նոյնքան կը տայ Պատկանեանի որդուն, որքան կովկասեան հայոց Բարեգործական կենտրոնական ամբողջ ընկերութիւնը:

Եթէ մեր Բարեգործական ընկերութեան ղեկավարները, որոնք մեր ամենանշանաւոր ազգային գործիչներ են համարվում (?), թէ իրանց դերով (քսովով), թէ իրանց խելով ու խմտութեամբ (?), այդպէս են գնահատում Պատկանեանի ազգին մատուցած անգնահատելի ծառայութիւնները,—դրանից կարող էք եղբայրացիներ թէ ո՞րքան ընդունակութիւն ունեն նոյն երեւելի մարդիկ գնահատել առհասարակ կենքի որ և է երեւոյթներ, շնորհ ունեն գնահատել և ուրիշ գործիչների արած ծառայութիւնները:

Նրանց վարմունքը մեր անմահ բանաստեղծի որդու վերաբերմամբ տալիս է մեզ այդ մարդկանց խելի, խղճի, և ազնուութեան չափը և մեր բոլոր մնացած հասարակաց գործերում, որոնք դժբաղդապէս նրանց ղեկավարութեան տակ են գտնվում:

Այո, խոստովանվում ենք, որ «Մշակի» խմբագրութեան կողմից նշանակած ամսական 5 ռուբլին շատ քիչ է Պատկանեանի պէս մի հոգեւոր գործիչի որդու ուսմանը նպաստելու համար, բայց մենք անում ենք, որքան կարող ենք և զուցէ մեր յիշից վեր մի բան մինչև անգամ: Իսկ մեր արածը, պարտնքը, կատարեալ ծաղր է, և եթէ կամենում էք, ընդունեցէք, որ մեր արածն էլ ուրիշ բան չէ, եթէ ոչ մի ամենադաւան ծաղր ձեւ վերաբերմամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՌՈՒՂԱՅԻՆ ԳՅԵՐ

Վերջին օրերս տեղական մամուլի մէջ հրապարակ է եկել մի շատ հին լուր.—այն է, թէ Անդրկովկասեան երկաթուղու Եւլախ կայարանից երկաթուղու գիծ պէտք է անցկացվի մինչև Շուշի, և որ իբրեւ չէ հարցը արդէն վերջնականապէս վճռված է, և չուտով կը ձեռնարկվի գծի շինութեան:

Այդ լուրի վերջին կէտը անհիմն է: Շուշու

ծինք բնական մարդիկ չեն, և նրանց գործողութիւններն էլ չեն զրկւած մարդկային զգացմունքների և ձգտումների հոգեբանական հիւրերի վրա.—այդ թելով կպցրած տեսարանների մի կուտակումն և անվերջ ֆրազների մի անսպասելի ժողովածու է:

Ահա թէ ինչու այդ պատմական ողբերգութիւնները և դրամաները՝ նախ պատմական չեն, և երկրորդ՝ ողբերգութիւններ և դրամաներ չեն, այն մտքով, ինչ մտքով որ ընդունված է հասկանալ դրաման և ողբերգութիւնը:

Եւ աւելի կասեմ Գրանք ֆէերիաներ էլ չեն: Եւ ասեցէք խնդրեմ, որտեղից կարող են դրանք ֆէերիայի տպաւորութիւն թողնել: Պատերազմ են ներկայացնում—բեմի վրա տասն քսան հոգի են դուրս գալիս, հայոց նշանաւոր մի թագաւոր են ներկայացնում.—բեմ են դուրս բերում նրան արշինը 10 կոպէկանոց չիլայից կարած ծիրախով, և կարգօնից չինած թագով, իբրեւ թէ հայոց նախարարներ են պատկերացնում, դուրս են բերում ոտները բարակ, փորը մէջքին կպած, պտուղի, փայտէ սուրը կապած՝ կլուներ, կարծէք թէ հայոց նախարարները իրանց օրում մի կուշտ փորով հաց չէին ուտում, և կամ թէ Հայաստանում երկաթ կամ պողպատ չը կար մի

գծի շինութիւնը, ինչպէս մեզ քաջ յայտնի է, վերջնականապէս չէ վճռված, իսկ չուտով գծի շինութեան սկսելը—միանգամայն չինծու լուր է, որը կարող է զուցէ մի փոքր ուրախացնել դարաբաղնիներին, բայց օգուտ, ի հարկէ, չէ կարող տալ, որովհետեւ Եւլախ-Շուշի ճանապարհը մնում է նոյնը, ինչ որ էր:

Սակայն չենք կարող չը նկատել, որ այդ լուրի կրկին ու կրկին հրապարակ գալը մի պերճախօս ապացոյց է, թէ որքան կարեւոր է այդ գծի շինութիւնը, և որպիսի սրտատուրի կերպով դրան սպասում է Վարաբաղի արդիւնաբերական-արտահանական գործը: Վերջապէս այդ լուրը մի առիթ է, որ ստիպում է կրկին յիշեցնել, թէ Անդրկովկասի շատ ուրիշ նահանգներ անհամբեր սպասում են երկաթուղային այն գծերին, որոնց մասին տասնեակ տարիներից ի վեր խօսք կայ: Այդ գծերից երկուսն են.—նախ այն գիծը, որ պէտք է միացնի Անդրկովկասեան երկաթուղին Կարսի հետ, իսկ միւսը այն գիծը, որը պէտք է անցնի Երևան և Երևանի նահանգի վրայով դէպի Երասխի փոխը, դէպի Ջուղան, կապելով պարսից սահմանապարտը նոյնպէս Անդրկովկասեան երկաթուղու հետ:

Եւ Երևանեան նահանգը այդ երջանիկ րօպէին սպասում է, իբրեւ իր անտեսական վերածնութեան դարադիմին: Այդ էլ շատ հասկանալի է: Մեր երկրի այդ ներքին նահանգները, իրանց բնական հարուստ բերքերով, իրանց բերրի հողով՝ ներկայումս փռում են աղքատութեան և ազիտութեան մէջ, քանի որ երկրի արտահանութեան ոչ մի միջոց չունի, և հաղորդակցութեան կատարեալ բացակայութիւնը ստեղծել է մի այնպիսի անշարժութիւն, որի մէջ աներևակայելի է որ և է բարեփոխութիւն մեր երկրի տնտեսական և մտաւոր կենքի մէջ:

Ուրիշ հնար չը կայ մեր երկրի ներքին նահանգները իրանց տնտեսական-մտաւոր անշարժութիւնից հանելու, բայց եթէ ստեղծելով հաղորդակցութեան լուս ճանապարհներ, կապելով երկրի յետընկած մասերը միմեանց հետ, և արտասահմանի հետ:

Այո, ճշմարիտ է, վերաբերակալից, կովկասեան սարերի վրայով, դէպի Անդրկովկասեան երկաթուղին նոր գիծ անցկացնելը, որը բացի տնտեսական կարեւորութիւնից կառավարութեան համար ունի և ռազմագիտական կարեւոր նշանակութիւն, մի առ ժամանակ կը յետաձգի Անդրկովկասում մի որ և է ուրիշ երկաթուղային գծի

սուր շինելու համար: Էլ ո՞ր մնայ ֆէերիան, իր շլացնող, վիթխարի տպաւորութեամբ, քանի որ այդ ներկայացումներին ամեն բան կօմիքական կերպարանքով է ներկայանում...

Իմ խորին համոզմունքն է, որ մեր պատմական այդ տեսակ պիէսաները պէտք է հանել րեպերտուարից: Գրանք այժմ միայն կարող են ծառայել իբրեւ նիւթեր հայոց թատրոնի պատմութեան համար: Եւ եթէ այդ գրութիւնները մի դեր ունէին կատարելու 60—70-ական թականներին—արդէն կատարեցին:

Մի և նոյն բեմի վրա, Շիլլերի և Շէքսպիրի պիէսաներ տուող բեմի վրա, Աղամանի խաղը տեսած հայ հասարակութիւնը չէ կարող մարտել «Արշակ» ու «Սամուելները»:

Շարունակել այդ պիէսաները տալ, կը նշանակէ միասնել նոյն իսկ հայոց թատրոնին, ժողովրդին յետ մղելով թատրոնից: Հայոց ինտելիգենտ հասարակութիւնը արդէն այդ ներկայացումներին չէ յաճախում: Այդ ամենքս գիտենք: Եւ ամենքս էլ տեսնում ենք, որ—երբ «պատմական» ողբերգութիւններ են ներկայացնում, ինտելիգենտ, միշտ թատրոն յաճախող հասարակութիւնը չէ գալիս, այլ գալիս է մտաւորապէս ստորին դասակարգը, նոյն իսկ ամբողջ

անցկացնելու միտքը, քանի որ պետական գանձարանը միջոց չունի այդ առաջին ծախսերը միանգամից անելու, — բայց գոնե վերադարձվող Մեքսիկական ճանապարհը շինելուց յետոյ, կարս-Արտաֆայի, Երևանեան-Ջուղայի և Եւրա-Շուշու երկաթուղային գծերը դառնային կառավարութեան համար օրվայ խնդիրներ:

Դա մի մեծ և կազդուրիչ յոյս կը լինէր մեր ժողովրդի համար:

ՆԱՄԱԿ ԴԻԼԻՃԱՆՑ

Նոյեմբերի 20-ին

Դիլիշանի բնակիչները կողմից մուսուլմանութեան տուած այստեղի հայոց եկեղեցու վերանորոգութեան հարցը, որը ահա քանի մի տարի է խաբխուել վիճակի մէջ է ընկած, բայց և վերանորոգութեան մասին դեռ առանձին հոգ չեն տանում ոչ իրանք գիւղացիք, և ոչ էլ այստեղի մշտաբնակ մի քանի ինտելիգենտ մարդիկ, որոնց բարոյական պարտաւորութիւնն է հոգալ ժողովրդի հոգեկան և մտաւոր պիտոյքները մասին և առաջնորդել նշանակաւոր մի ազգայն գործում: Արդեօք, նոյն ինտելիգենտ մարդիկ առաւել չէին բարձրացնի գիւղացիների աչքում իրանց յարգն ու համարմունքը և չէին զբաւ գիւղացիներին հաւատը դէպի ուսումը և գիտութիւնը, եթէ պի կ'ընէին որ սարքերու և հարկերու միասնութեան տեղ մտածէին փողը ինչ գիւղացիների մտաւոր լուսաւորութեան մասին և այն փողերով որ ծախսում են լոկ որկրամոլութեան համար, մի փոքրիկ ժողովրդական ընթերցարան-գրադարան բանային ուսումնարանին կից, որտեղ գիւղացիները զբաղէին մասը, որը այժմ, չնորհով ուսումնարանի, մտաւոր մի յայտնի կօնախնդնէ և կազմում, ձմեռվայ երկուր և անգործ երեկոները, փոխանակ առաւելական հեքիաթներով զբաղվելու, կամ գինեմանով ընկած լինելու, խելացի գրեթէ ընթերցանութեամբ զբաղվին ու իրանց խիստ նեղ մտաւոր հորիզոնը ընդլայնացնէին: Առ ժամանակ թողնենք այդ անիրագործելի բարի մտածմունքները և դիմենք իրականութեան, այն է Դիլիշանի չընկալելի հրաշալի բնութեանը: Որքան Դիլիշան աւանը գեղեցիկ է իր դիրքով, նոյնքան առաւել հրաշալի է նրա շրջակայքը, որտեղ երբեմն եղել են չէն գիւղեր և վանքեր, իսկ այժմ մնացել են դրանցից միայն աւերակ փլուտակներ, որոնք ամեն մի տեսնող զգայուն հայի սրտին ցաւ են պատճառում: Դիլիշանի շրջակայքի բանաստեղծական գեղեցկութիւնը յանձն չեմ առնում նկարագրել, բայց միայն այսպէս կ'ստեղծ եթէ ամբողջ կովկասում կայ մի գեղեցիկ անկիւն՝ դա Դիլիշանն է իր շրջակայքով, և թէ ոչ ամենագեղեցիկը, գոնե գեղեցիկներից մէկը կարող է համարվել: Այսպէս արեւմտեանում է մի հիւսիսային համակարգութիւն. սար, ձոր, կիրճ, հովիտ, բազմաթիւ գետակներով և սարերի ճեղքերից բխող հանքային ջրերով, և այդ բոլորը շրջապատված է խիտ անտառով: Բայց ամեն, որ բնութեան այդ գեղեցկութեան մէջ չեն պահպանվել երբեմն ծաղ-

կած դրութեան մէջ եղած՝ արհեստի և ճարտարապետութեան կողմից հրաշալի վանքերը:

Պէտք է ասել, որ աւանդապահ դիլիշանցիք ամենայն վերմուսանդութեամբ պաշտում են այդ սրբապետների բնակարանը և այդ վայրերից ամեն մէկը ունի իր ուխտի օրը: Այդ ուխտաւորներից մէկն է Պուճուռ Դիլիշ կոչվածը, որը գտնվում է Դիլիշանից երկու վերստ հեռու գէպի արեւելք: Վարդապետ օրը, բոլոր աւանդական սովորութեան, այդ խաչի տունն է համարվում և ամենայն մի դիլիշանցի, լինի դա մշակ կամ չքաւոր կարողութեան տէր, սեպուճ պարտաւորութիւն է համարում դնալ այդ ուխտաւորը, իր ընտանիքի հետ միասին, խաչը համբուրելու, խոնկ ու մոմ վառելու և մատաղ անելու (չո՛հ մատուցանելու) այն եօթը հատ խաչ-քարերի առաջ, որոնք բոլորածն շարած են մի մեծ կաղնու ծառի տակ: Բացի հայերից այդ խաչ-քարերի առաջ մոմ էլին վառում և բարձրաձայն աղօթում թէ քրդեր և թէ քրդուհիներ Ասում են, որ այդ կաղնու ծառը մի դիլիշանցի գործելուն ունի և ինչպէս երևում է գիւղացիք հաւատում են դրան, եթէ չընքը կանայք նրա վրա մի կտաւի կտոր են կապում, կատարվում է նրանց ցանկութիւնը, — նրանք ծնում են: Երբի այդ էր պատճառը, որ ծառի ներքին ճեղքերը զարդարված էին գոյնզգոյն ժապուէններով: Ինչպէս պատմում են այդ Պուճուռ Դիլիշն երբեմն եղել է հայաբնակ գիւղ, որի հետքն անգամ չէ երևում այժմ, բացի վերոյիշեալ եօթը հատ խաչքարերից և մի քանի հատ էլ անկանոն կերպով ընկած գերեզմանաքարերից, որոնց վրա ոչ մի գիր և թւանշան չէ նշանակում: Հատ հետաքրքիր էր լինանայ, արդեօք ինչն էր եղել այդ գիւղի չքանալու պատճառը, բայց ոչ որ ինձ բացատրել չը կարողացաւ, թշնամու աւերիչ ձեռքը, թէ ընտելութեան անաջող պայմանները: Առաջին հաղիւ թէ վերջին լինի, որովհետեւ այդ աւերակ գիւղի տեղում, այժմ աչքի են ընկնում դիլիշանցիների հարուստ արտերը: Առհասարակ դիլիշանցիք շատ փող տեղեկութիւն ունեն իրանց շրջակայքի աւերակների մասին և նրանց պատճառն էլ իրականութիւնից դուրս առաւելներ են, այնպէս որ մարդ ղփուարանում է նրանց ասածներին հաւատալ և նրանցից մի որոշ եղրակացութիւն դուրս բերել: Արդեօք նրանց տգիտութեանը վերաբերել, թէ անհետաքրքրութեանը: Բացի այդ վերը յիշուած Պուճուռ Դիլիշի Դիլիշանից 7 վերստ հեռու կան, դարձեալ երկու աւերակ վանքեր, որոնցից մէկը համեմատաբար առաւել լաւ է պահպանված, քան թէ միւսը. դրանք կոչվում են «Ջուլիստի վանք»: Ինչպէս աւանդութիւնը պատմում է, նրանց կառուցել են մի քուր և մի եղբայր՝ Գալիք և Խաչատուր անունով. բայց նրանց վրատակների պատերի վրա հաղւ են նշանակում արձանադրութիւնները: Այդ հին ուխտաւորները, թէ են նշանակված որ չունեն, իբրեւ խաչի տուն, բայց ժողովուրդը երբեմն յաճախում է և երկրպագելով հինաւորացի նշխարներին, մոմ է վառում խաչքարերի առաջ:

Թ.

Այդպիսի տարօրինակ դէպքեր հայոց թատրոնում յաճախ են պատահում, և պիտիաս կերպով ապացուցանում են, թէ ինչն է ժողովրդի համակրութեան և հակակրութեան գլխաւոր շարժառիթներից միընդ, ոչ թէ խաղացողի և պիտիայի արժանաւորութիւնն է, այլ մի ուրիշ գաղափար...

Եւ ահա հայոց թատրոնը, պատմական պիտիաներ ներկայացնելիս՝ պէտք է աշխատի, ոչ թէ իր անշնորհ ողբերգութիւններով, և կիսատ պրուստ պատրաստութիւններով թուլացնել այդ զգացումը, այլ լաւ պիտիաների միջոցով աւելի վառել, աւելի ամբասցնել:

Հարուստացելով այդ սոսնձ, անբնական պատմական պիտիաների ներկայացնելը, հայոց թատրոնը կարող է մեր միջին դասակարգին և ամբողջին էլ նույնպէս յետ մղել մայրենի թատրոնից, ինչպէս արդէն յետ է մղել ինտելիգենտ դասակարգին, որը, ինչպէս ասեցի, այլ են չէ յաճախում մեր պատմական պիտիաների ներկայացմանը:

Ով գիտէ, դուցէ դուրս կը դան նոր մարդիկ և կը գրեն մեր պատմութիւնից վերջը՝ համով և հոտով ողբերգութիւններ և դրամաներ: Այդ ապագայի գործ է:

Իսկ այժմ, երբ մենք միայն անշնորհ պատմա-

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 նոյեմբերի
«Մշակի» 134 համարում դեռեղված է թատրոնական Մասնագիտութիւնի նամակը, որ, ի միջի այլոց, ասված է, որ Մասնագիտութիւնի յանձնարարութիւնն է նրա անդամներից մէկը յայտնել և ինձ, թէ ինձ յատկացրած է թատրոնում մի բաղադրութիւն և թէ ես անմիջապէս հրաժարվել եմ Մասնագիտութիւնի յարգանքն ընդունելուց:

Նախ՝ թատրոնական Մասնագիտութիւնը կողմից այդպիսի յանձնարարութիւնն ուղղութեամբ ոչ ոք ինձ մօտ չէ եղել և ոչ էլ հաղորդել է ինձ այդ վճիռը:

Երկրորդ՝ իր արժանաւորութիւնը ճանաչող մարդը բացէ ի բաց կամ, ինչպէս Մասնագիտութիւնը ասում, անմիջապէս չէ մերժում իրան ցոյց տուած յարգանքը ոչ թէ մի Մասնագիտութիւն, այլ մի անհատի կողմից: Եւ եթէ ինձ որ և է պատշաճ ճանապարհով հասած լինել Մասնագիտութիւնը, ես, ի հարկէ, ձրի բաղադրութիւնն էի ընդունել, բայց կարող կը լինէի փնտհատել Մասնագիտութիւնը արտադրած յարգանքը:

Թատրոնին ծառայելով, ես զաղափարի եմ ծառայել. թատրոնի համար գրելով, իմ պարտականութիւնս եմ կատարել: Այս մասին ես մինչև օրս ոչ ոքից որ և է վարձատրութիւն չեմ պահանջում և դիտարկութիւն չեմ ունեցել պահանջելու: Այդ գիտեն ամենքը:

Ընդունեցէք, մեծապատիւ խմբագրապետ, խորին յարգանքս:

Գաբրիէլ Սունդուկեանց

ՆԵՐՍԻՆ ԼՈՒԿՆԵՐ

Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ ապել հետեւալը. «Ընկերութեան տասնամեայ շրջանի առթիւ» խորհուրդը նուրբ է ստացել «Արքիւր» և «Տարած» հանդէսների խմբագիր, պ. Տիգրան Նազարեանից, հաղարուրդը արժողութեան գրեթէ նրա հրատարակութիւններից, որի համար ընկերութիւնը հրապարակով մատուցանում է իր խորին չնորհալիւթիւնը պ. Նուրբաւորան:

Մեզ հաղորդում են, որ հանդուցեալ Աղաման թոզիկ է բաւական ձեռագրիներ՝ թէ արձակ և թէ ոտանաւոր: Ցանկալի է, որ տաղանդաւոր արտիստի զրուածները որքան կարելի է շուտով լոյս տեսնեն: Իսկ եթէ պ. Պոլիս նրա բարեկամները անխորդ են այդ բանն անել՝ այն ժամանակ մենք կառաջարկենք՝ այդ անտիպ գրուածները «Հրատարակական ընկերութեան» յանձնել, տպագրելու համար:

Ցանկանալով օգնութեան ձեռք կարկառելու սովականներին, Մոսկվայում ուսուցողների շրջանը սրանից մի քանի ժամանակ առաջ վրձնեց հրատարակել մի ժողովածու, որից ստացած արդիւնքը պիտի յատկացվի սովականներին: Հաստատվում է:

Կան պիտիաներ ունենք մեր ընկերութեան մէջ, պէտք է վերջ տանք նրանց ներկայացմանը, այն մտքով, որ թատրոնի ընդհանուր նշանակութիւնը և ապագայ աշողութիւնը չէ կարելի դնել ժամանակակից շրջանակներին, ասելով. «մենք կը ներկայացնենք այն պիտիան, որովհետեւ նա մուտք է տալիս»:

Սակայն կայ և մի միջոց, որը թոյլ կը տայ առանց թատրոնի ընդհանուր գործին վնասելու, շարունակել պատմական գրուածների ներկայացումը: Դա՝ պատմական գրուածներից ֆէ և Երիւսն և Եր պատրաստելն է: Թող հայոց թատրոնի գործին մօտիկ անձինք, մեր հին և նոր դերասանները միասին, միահամուռ ոյժերով՝ աշխատեն այդ «պիտիաներից» ֆէերիաներ պատրաստել, լաւ սարք ու կարգով, լաւ տեսարաններով, չնորհով երգեցողութեան և մուլիկայով, և սկսեն ներկայացնել «Անի քաղաքի աւերում», «Արշակ Բ», «Վարդանանց պատերազմ» և այլն, իբրեւ լաւ ֆէ և Երիւսն և Եր, որոնք անկասկած մեր ամբողջ ժողովրդի մեծ քանակութեամբ կը գրաւեն թատրոն, բացի դրանից կը տան թատրոնին մուտք, ամբողջ գաղափարը, հայոց բնովն էլ՝ աշողութիւն: Ապա թէ ոչ, կընկում եմ, ընկնելով՝ օրվայ աշողութեան ետեւից, մտածելով միմիայն այն պիտի պիտիաներ տալու մասին, որոնցով կարե-

շուտով այդ գրական ժողովածուն լոյս կը տեսնի Մոսկվայում: Ժողովածուն մասնակցում են Տօլստոյ, Ռուսկոյ, Կորոնիկո, Բորորիկին, Չեխով, Միխայիլովիչ, Կովալսկի, Պիպին, և ուրիշ յայտնի գրողներ և գիտնականներ: Այժմս Կորէ ուղարկել է այդ ժողովածուի մէջ տպագրելու համար իր մէկ անտիպ աշխատութիւն, «Գաւառական կրթութեան հարցը»: Ժողովածուն կարծեսայ 3 բաժնով Մտորագրութիւնն ընդունվում է «Русск. Библ. МОСТ» լրագրի խմբագրատանը, Մոսկվայում:

Մեզ խնդրում են տպագրել հետեւալի գիտութիւն ընթերցող հասարակութեան. «Յիւլիեր օր» հիմնված էր Գերմանիայում, 18 տարի սրան առաջ մի մանկավարժական ընկերութիւն, հետեւալ անունով՝ «Ընկերութիւն գիտնական մանկավարժութեան» (Verein für die wissenschaftliche Paedagogie): Այդ ընկերութիւնը մեծ հետեւանքներ է հասել և ունի մինչև 1500 անդամներ, որոնք ցրված են Եւրոպայում, Ամերիկայում, Նիդիւսի և Ասիայում: Կովկասում սակայն մեծ առաջադիմութիւն չէ ունեցել, քանի որ չէ եղել այստեղ ոչ մի ժամանակ ներկայացուցիչ ընկերութեան: Ահաւասիկ այդ ընկերութիւնը նշանակել է Կովկասի համար ներկայացուցիչ Յովհաննէս Բաբուսարեանից: Ընկերութեան անդամ զբւղովները կարող են դիմել պարոնին, հետեւալ հասցեով՝ Тифлисъ, Набережная улица № 11: Անդա. մակցութեան վճարն է տարեկան 2 ռ. իսկ դրա փոխարէն անդամները կը ստանան ընկերութեան տարեկան թիւ, որը պարունակում է իր մէջ ամենանոր հետազոտութիւններ մանկավարժական աշխարհում: Աւելորդ չէր լինի, եթէ գերմաներէն հասկացող մեր հայ ուսուցիչները դրվէին անդամ այդ ընկերութեան:

Մեզ ուղարկված է հետեւալ տեղեկութիւնը տպագրելու համար: Կիրակի, նոյեմբերի 17-ին, Կ. Պոլսում վաղեմակ է նախկին յայտնի տպարանատէր և փորագրիչ Յովհաննէս Միսէնդիսեանը Հանգուցեալ Պարոնեանի «Ազգային ջոշերից» մէկն էր Միսէնդիսեան: Բացի այն որ իբրեւ տպարանատէր 50-ական թւականներից ամենաաշողան էր, նա տաճկական բոլոր թղթադրամների և արժեթղթերի փորագրութիւնները իր աշողակ գրչի արդիւնքն էին: Իր գրչի արտը ընկերութեան նաեւ Կ. Պոլսում տաճկներից զո՞ւ ծածծած տպարանական կատարելագործված տաճկերը, որոնք բոլոր գիտնատիւներից հաշակված իբրեւ ամենագեղեցիկ և նուրբ գործ: Միսէնդիսեան խոր ծերութեան էր հասած և մինչև վերջին ժամանակներս շարունակ աշխատում էր:

Երեմիսեան, նոյեմբերի 26-ին մեզ գրում են. «Այստեղ տիրող ցրտերից յետոյ սկսեց այժմ տաք օրեր անել: Ապա սկսեցին անձրևներ դալ»:

Մեզ գրում են Երեմիսեան. «Տեղի քաղաքային կղերի կապալը այս տարի բարձրացաւ մինչև 10,000 ռուբլի, այն ինչ անցեալ տ»:

Եւ եթէ այժմ Գաբրիէլ Սունդուկեանի մեր այժմեան կեանքից վերջը՝ համեմատաբար խելացի պիտիաները մոտք չեն տալիս և թատրոն չեն գրաւում մեր միջին դասակարգը, դա պատճառը, մեծ մասամբ, անհամ պիտիաներով ժողովրդի ճաշակը փչացնելն է:

Այդ ճշմարտութիւնը շատ լաւ էր հասկացել մեր ամենամեծ դերասանը. Աղաման, որը չէ նայած ոչ չէ Եր գալի էր, և կարող էր պատմական պիտիաներ խաղալով թատրոնը լցնել տալիս ամեն տեսակ հասարակութեամբ, ուրեմն և մեծ օգուտներ վերցնել, բայց միշտ զգուշացնելով իր փրկութիւնը զէպի այդ անհամ պիտիաները, հաւաքածում էր նրանց տքնելով թատրոնի հետ միշտ կապած պահել և՛ դաղափարը, և՛ գեղարուեստը: Թող հանճարաւոր արտիստի օրինակը ուղեցնէ լինի հայ դերասանները և մեր թատրոնի այժմեան և ապագայ ընկալմանը համար:

Խ. Աղեւեր

Типографія Канцел. Главннач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 838.